Հաստատված է ԳՊՀ գիտական խորհրդի
2021թ. օգոստոսի 27-ի թիվ 8 նիստում
Ռեկտոր՝ Ռ.Հակոբյան
«27» օգոստոս 2021թ.

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՍԿՍՆԱԿ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՄԵՆԹՈՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳ
(փոփոխություններով)

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը (այսուհետ՝ Կարգ) սահմանում է Գավառի պետական համալսարանի (այսուհետ՝ Համալսարան) սկսնակ դասախոսների և աշխատակիցների մենթորության կազմակերպման հիմնական դրույթները:

2. Կարգը համապատասխանում է ՀՀ բարձրագույն կրթության ոլորտը կարգավորող օրենսդրության պահանջներին, Համալսարանի կանոնադրության դրույթներին:

3. Կարգը նախատեսում է ավագ գործընկերների կողմից Համալսարանի սկսնակ, մանկավարժական աշխատանքի փորձ չունեցող դասախոսների և այլ աշխատակիցների (այսուհետ՝ Աշխատակիցներ) աջակցության՝ մենթորության կազմակերպման ձևերը:

4. Մենթորությունը Համալսարանի մարդկային ռեսուրսների զարգացման և արդյունավետ կառավարման, որակի կորպորատիվ մշակույթի ապահովման համակարգի բաղկացուցիչ մասն է:

II. ՄԵՆԹՈՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ՄԵՆԹՈՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

5. Մենթորության հիմնական նպատակներն են.

1/ Համալսարանի երտասարդ աշխատակիցներին աջակցությունը, գիտահետազոտական աշխատանքներում ուղղորդումը,

2/ Համալսարանի աշխատակազմը որակյալ կադրերով համալրումը,

3/ Համալսարանում կորպորատիվ մշակույթի զարգացումն ու կորպորատիվ պատասխանատվության բարձրացումը,

4/ Համալսարանում կրթական և գիտահետազոտական գործընթացների որակի

ապահովումը։

6.Մենթորության խնդիրներն են.

1/ Աշխատակիցներին Համալսարանի առաքելության և ընդհանուր քաղաքականության ներկայացումը և աշխատանքային գործընթացներում ներգրավումը,

2/Աշխատակիցների մասնագիտական, մանկավարժական, գիտահետազոտական իրազեկությունների զարգացումը,

3/Աշխատակիցներին Համալսարանի ակադեմիական ազնվության, բարեվարքության կանոններին, էթիկայի նորմերին, ներքին կարգապահական կանոններին ծանոթացումը։

7. Մենթորը Համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի այն անդամն է, որն ունի մանկավարժական, գիտահետազոտական աշխատանքի առնվազն 5 տարվա փորձ, մասնագիտական անհրաժեշտ հմտություններ, հեղինակություն, և, որպես կանոն, գիտական աստիճան և /կամ/ կոչում։

Որպես մենթոր կարող է հանդես գալ մասնագիտական կրթական ծրագրի /այսուհետ՝ ՄԿԾ/ ղեկավարը։

8. Մենթորությունը Աշխատակիցների նկատմամբ կարող է իրականացվել մեկից երեք տարի ժամկետով։

9.Մենթորի հիմնական գործառույթներն են Աշխատակիցներին.

1/Համալսարանի ներբուհական ակտերին՝ զարգացման ծրագրին, կանոնակարգերին, ընթացակարգերին, այլ փաստաթղթերին ծանոթացումը,

2/ իրավունքների և պարտականությունների պարզաբանումը,

3/ կրթական և գիտահետազոտական աշխատանքներում ներգրավումը,

4/ համալսարանական միջավայրին ինտեգրումը,

5/ մեթոդական նյութերի մշակման գործում աջակցության ցուցաբերումը,

6/ մասնագիտական խորհրդատվության մատուցումը,

7/գիտահետազոտական աշխատանքներում ուղղորդումը,

8/օգտակար սոցիալական փորձի, համալսարանական արժեքների և ավանդույթների փոխանցումը,

9/ մասնագիտական, մանկավարժական և կազմակերպական կարողությունների զարգացմանը նպաստումը,

10/ աշխատանքային պարտականությունների կատարման համար անհրաժեշտ տեղեկատվության և նյութերի տրամադրումը,

11/ ուսումնական գործընթացի կազմակերպման սկզբունքների պարզաբանումը, կրեդիտային համակարգին և գործող գնահատման համակարգին, ուսուցման փոխներգործուն մեթոդներին և կրթական տեխնոլոգիաներին ծանոթացումը,

12/ կրթական գործընթացին վերաբերող հարցերի անհատական և խմբային խորհրդատվությունների կազմակերպումը,

13/ տարեկան աշխատանքային պլանի համատեղ մշակումն ու հետագա

ուղղորդումը,
14/ անհրաժեշտության դեպքում՝ երաշխավորության տրամադրումը,
15/ մասնագիտական առաջխաղացման հարցերում այլ կերպ աջակցումը։
10.Մենթորները, Համալսարանի Աշխատակիցներին աջակցելու գործառույթներն իրականացնելիս, համագործակցում են համապատասխան ամբիոնի վարիչի, ֆակուլտետի դեկանի, Համալսարանի ակադեմիական քաղաքականության բաժնի և ըստ անհրաժեշտության՝ այլ կառուցվածքային ստորաբաժանումների հետ։
11. Մենթորների աշխատանքի արդյունավետությունը գնահատում է Համալսարանի որակի ապահովման բաժինը։
12. Մենթորների աշխատանքը վերահսկում է Համալսարանի ուսումնագիտական գծով պրոռեկտորը։
13. Յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբում մենթորը ՄԿԾ ղեկավարին, ամբիոնի վարիչին կամ դեկանին ներկայացնում է Աշխատակցի հետ մշակած տարեկան աշխատանքային պլանը։
14.Յուրաքանչյուր կիսամյակի ավարտին Մենթորը Համալսարանի ուսումնագիտական գծով պրոռեկտորին ներկայացնում է կիսամյակային աշխատանքների հաշվետվություն, որոնք պրոռեկտորը ներկայացնում է Համալսարանի ռեկտորատի քննարկմանը։
15.Տարեկան հաշվետվությունների հիման վրա լավագույն Մենթորները Համալսարանի ռեկտորատի կողմից արժանանում են նյութական և բարոյական խրախուսման։

III. ՄԵՆԹՈՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

16.Մենթորն իրավունք ունի.
1/ ստանալ Աշխատակցի վերաբերյալ տեղեկատվություն այն ամբիոնից, որտեղ իրականացնում է խորհրդատվական գործունեություն,
2/ ստանալ աջակցություն ուսումնական ստորաբաժանումների կողմից՝ իր գործառույթներն իրականացնելու համար,
17.Մենթորը պարտավոր է
1/ ֆակուլտետի ուսումնամեթոդական խորհրդի քննարկմանը ներկայացնել Աշխատակցի մասնագիտական, մանկավարժական, գիտահետազոտական, կազմակերպական և այլ կարողությունների զարգացմանն ուղղված առաջարկներ,
2/աջակցել Աշխատակցին՝ պաշոնական առաջխաղացման, գիտակրթական ծրագրերում ընդգրկվելու և այլ հարցերում։

IV. ԱՇԽԱՏԱԿՑԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

18. Աշխատակիցն իրավունք ունի.
1/ներկայացնել առաջարկներ Համալսարանի ակադեմիական քաղաքականության բաժնին՝ կապված մենթորության կազմակերպման հետ,
2/ ներկայացնել առաջարկներ Համալսարանի որակի ապահովման բաժնին,

համապատասխան ամբիոնին կամ ֆակուլտետի դեկանին՝ կապված մենթորության գործընթացի բարելավման հետ,

3/դիմել մենթորին և ստանալ աջակցություն ՄԿԾ մասնագիտական և ոչ մասնագիտական առարկաների առանձին թեմաների վերաբերյալ,

4/ դիմել մենթորին և ստանալ խորհրդատվություն գիտահետազոտական աշխատանքների կատարման վերաբերյալ,

5/ դիմել մենթորին և ստանալ աջակցություն՝ Համալսարանում իր աշխատանքային պարտականությունների կատարման այլ հարցերի հետ կապված,

6/ մենթորի աշխատանքներից դժգոհության դեպքում՝ դիմել Համալսարանի ուսումնագիտական գծով պրոռեկտորին՝ նոր մենթոր նշանակելու համար։

19.Աշխատակիցը պարտավոր է.

1/ բարեխղճորեն կատարել իր աշխատանքային գործառույթները,

2/ աշխատել հաստատված աշխատանքային պլանի և ժամանակացույցի համաձայն,

3/ կատարել մենթորի հանձնարարությունները, հետևել նրա ցուցումներին և խորհուրդներին,

4/պահպանել Համալսարանի ներբուհական ակտերի, ներքին կարգապահական կանոնների պահանջները։

V. ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

20. Երիտասարդ գիտամանկավարժական կադրերի պատրաստումը մենթորների գործունեության հիմնական նպատակն է։

21. Երիտասարդ գիտամանկավարժական կադրերի պատրաստման նպատակի իրագործումը պահանջում է հետևյալ խնդիրների լուծում.

1/ արդիականացնել Համալսարանի ենթակառուցվածքները և գիտական հետազոտությունների համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազան,

2/ ներգրավել հասարակական և բնագիտական ոլորտների՝ բարձր որակավորում ունեցող մասնագետներին որպես գիտական ղեկավարներ,

3/ խրախուսել երիտասարդ գիտամանկավարժական կադրերի մասնակցությունը գիտահետազոտական ծրագրերի իրականացմանը,

4/ խրախուսել երիտասարդ մասնագետների կողմից ՀՀ Գեղարքունիքի մարզի զարգացման հիմնախնդիրների և առաջնահերթությունների վերաբերյալ գիտական հետազոտությունների իրականացումը,

5/ ներդնել կրթության, գիտության և նորարարական տեխնոլոգիաների ներդաշնակ զարգացումն ապահովող կառուցակարգ՝ խթանելով ՀՀ Գեղարքունիքի մարզում գործող ընկերությունների ներկայացուցիչների և երիտասարդ մասնագետների ներգրավումը Համալսարանի ամբիոնների գիտահետազոտական ծրագրերում,

6/ մշակել և ներդնել երիտասարդ մասնագետների գիտահետազոտական գործունեության արդյունավետության գնահատման նոր կառուցակարգեր՝ ապահովելով նրանց վարձատրության չափի ուղղակի կախվածությունը գիտահետազոտական աշխատանքի արդյունքներից,

7/ մշակել և իրականացնել երիտասարդ գիտամանկավարժական աշխատողների աշխատանքային և սոցիալ-տնտեսական պայմանների բարելավման ծրագրեր՝ գիտական աշխատողի կարիերայի գրավչության ապահովման և կադրերի հոսունության կանխման նպատակներով,

8/ նպաստել գիտամանկավարժական կազմի երիտասարդ անդամների՝ օտար լեզուների իմացության աստիճանի բարձրացմանը, նրանց ակադեմիակական շարժունությանը,

9/ ընդլայնել գիտահետազոտական գործունեության բնագավառում Համալսարանի միջազգային համագործակցությունը, պայմաններ ստեղծել արտասահմանյան գիտակրթական հաստատություններում բարձր առաջադիմությամբ մագիստրոսների, ասպիրանտների, սկսնակ դասախոսների կրթության կազմակերպման, գիտահետազոտական նախագծերի իրականացման, ինչպես նաև արտերկրում ուսանած, աշխատած և վերադարձած կադրերին Համալսարանի դասախոսական կազմում ընդգրկելու համար,

10/ պարբերաբար հրավիրել արտասահմանյան գիտնականների և մանկավարժների, Հայաստանի Հանրապետության առաջատար գիտական, ուսումնական հաստատությունների գիտաշխատողների՝ երիտասարդ մասնագետների համար դասախոսություններով հանդես գալու, վարպետության դասեր վարելու, մենթորության ծրագրեր իրականացնելու համար: